ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

ՄԵՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ՀՀ, Երևան,

Էլ. հասցե՝ *maryalecsanyan90@gmail.com*

DOI: 10.24234/scientific.v1i43.3

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է երիտասարդ հայ ընտանիքներում ամուսինների համատեղելիության, սոցիալ-հոգեբանական հարմարման հարցը, ինչը, մի կողմից, հենվում է դրական զգացմունքների, հուզականության, մյուս կողմից, տարբեր պահանջմունքների (սեռային, նյութական, հոգևոր), այդ թվում և հետաքրքրությունների, կարծիքների, հայացքների համաձայնեցման, ընտանիքում ամրագրված արժեքային համակարգի վրա: Ներկայացված են նաև զույգերի հոգեբանական համատեղելիության կողմերը: Նշված կողմերի քննարկմամբ բացահայտվում է հայ ընտանիքներում արժեքների համատեղելիության, դրանց համապատասխանության գերակայությունը, ինչն ապահովում է երիտասարդ ամուսինների փոխըմբռնումն ու համակեցությունը: Իրականացրած հետազոտության արդյունքում բացահայտվել է հայ ընտանիքներում համատեղ կյանքի գերակա ոլորտներից մեկը, այն է՝ երիտասարդ ամուսինների արժեքային համակարգի համապատասխանությունը, ինչը ներկայացրել ենք հիերարխիկ համակարգի տեսքով: Մշակված է նաև երիտասարդ հայ ընտանիքներում ամուսինների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների դասակարգման մոդելը: Այստեղից էլ, խնդրի շուրջ կատարված վերլուծություններն ու ուսումնասիրությունները պայմանավորում են հոդվածի նորույթը:

Բանալի բառեր՝ երիտասարդ հայ ընտանիք, ամուսիններ, համատեղելիություն, ներդաշնակություն, սոցիալ-հոգեբանական հարմարում,

ընտանեկան արժեքներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքի տարբեր փուլերում, մարդն, իր կամքից անկախ, հարմարվում է այլոց հետաքրքրություններին, ցանկություններին, պահանջմունքներին, այլ կերպ ասած՝ շրջակա միջավայրի փոփոխվող պայմաններին, միաժամանակ պահպանելով սեփական արժեքային համակարգը և աշխարհայացքը (Анцупов А., 2005):

Նշվածը վերաբերում է նաև ամուսնական կամ ընտանեկան հարմարմանը: Ամուսինների սոցիալ-հոգեբանական հարմարումը ենթադրում է ընտելացում միմյանց և ընտանիքում ստեղծված իրադրությանը: Եթե դիտարկենք երիտասարդ հայ ընտանիքում ամուսինների հարմարման գործընթացը սոցիալ-հոգեբանական տեսանկյունից, ապա առաջին հերթին, այն նրանց դրական զգացմունքների՝ սիրո, հարգանքի, գրավչության, համակրանքի, նվիրվածության և տարբեր պահանջմունքների՝ սեռական, նյութական, հոգևոր, ինչպես նաև նրանց հետաքրքրությունների, գաղափարների, դիրքորոշումների, կարծիքների ու հայացքների համաձայնեցումն է (Նալչաջյան Ա., 2004):

Սակայն միշտ չէ, որ երիտասարդ ամուսինների սոցիալ-հոգեբանական հարմարումը հաջողությամբ է իրականացվում: Այս դեպքում ընտանիքում ի հայտ է գալիս հարմարմանը հակադիր երևույթ՝ ապահարմարումը, որը նպաստում է՝ խնդրահարույց, նևրոտիկ, ապասոցիալական, անբարենպաստ, բախումնային ընտանիքների ձևավորմանը: Ուստի, երիտասարդ հայ ընտանիքում ամուսինների սոցիալ-հոգեբանական հարմարման արդյունավետության գրավականն է հանդիսանում նրանց հոգեբանական համատեղելիությունը:

Երիտասարդ ամուսինների հոգեբանական համատեղելիության հարցում շատ կարևոր է նրանց այս կամ այն չափով նման և տարբեր լինելը: Հարց է ծագում. ամուր ընտանիք կազմելու համար ցանկալի է զույգերի տարբերությո՞ւնը, թե՞ նմանությունը: Այս հարցին սպառիչ պատասխան գտնել գրեթե հնարավոր չէ, քանզի մարդիկ, ի սկզբանե, տարբեր են՝ օժտված բնածին և ձեռքբերված ինքնատիպ հատկանիշներով և հատկություններով: Բնածին հատկանիշներն ու հատկությունները պետք է ընդունել, քանի որ դրանք մնում են անփոփոխ, իսկ ահա ձեռքբերված հատկանիշներն ու հատկությունները, կարող են փոփոխության

ենթարկվել հենց հարմարման ընթացքում:

Մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքում հանգեցինք այն համոզմանը, որ ամուր ընտանիքի կառուցման կարևոր նախապայմանը երիտասարդ ամուսինների հոգեբանական համատեղելությունն է, որն ընդգրկում է մի շարք ոլորտներ:

Հոգեֆիզիոլոգիական, ինչը մարմնական և խառնվածքների համատեղելությունն է: Այս առումով միմյանց լրացնում են սանգվինիկ-մելանխոլիկ և խոլերիկ-ֆլեգմատիկ խառնվածքով զույգերը:

Սեռական համատեղելիություն, ինչը ենթադրում է տղամարդու և կնոջ սեռական պահանջմունքների և հարաբերություններում հուզականության համընկնումը:

Իմացական համատեղելիությունն իմացական մակարդակների համընկնումն է:

Բնավորությունների համատեղելիություն, երբ ամուսինները չեն ձգտում փոխել միմյանց բնավորության որևէ կողմը, քանի որ դրանք բավականին խորքային են և անձնային: Փոխարենը փորձում են պարզապես հարմարվել կամ ընտելանալ դրանց:

Վերոնշյալ ոլորտները բացարձակ չեն, քանի որ գոյություն ունեն նաև երիտասարդ զույգեր, որոնք համատեղելի են դառնում բարձր ինքնագիտակցության, անձնային աճի և հասունության, մասնագիտական գործիմացության, բարոյական արժեհամակարգի, հաղորդակցման մշակույթի, ապրումակցման և հանդուրժողականության շնորհիվ: Ակնհայտ է, որ ընտանիք կազմելը դեռ բավական չէ նրա հարատևման համար, այն պահանջում է մշտական և փոխադարձ ուշադրություն՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Մեր ուսումնասիրությունները փաստում են, որ երիտասարդ հայ ընտանիքում ամուսինների սոցիալ-հոգեբանական հարմարման առաջնային և հենքային ոլորտը սեռական համատեղելիությունն է: Այն բավական բարդ երևույթ է, որը կախված է բազմաթիվ պայմաններից:

Սեռական համատեղելիության կամ անհամատեղելիության պատճառները բազմազան են՝ սոցիալական, հոգեբանական, կենսաբանական և այլն: Նշված

հիմնախնդրի վերաբերյալ հետազոտություններում (Брутянский Д. & Кришталь В., 2003) առաջադրվում է հետևյալ դասակարգումը.

Սոցիալ-հոգեբանական անհամատեղելիություն:

Անհամատեղելիության այս ձևի հիմքում ընկած է ամուսինների միջանձնային հարաբերությունների խաթարումը, ինչն էլ արդյունք է փոխադարձ սիրո և հարգանքի բացակայության, միմյանց հետաքրքրությունների անհամապատասխանության: Որոշ դեպքերում այդ անհամատեղելիությունն առաջանում է ընտանիքի սոցիալ-տնտեսական ոչ նպաստավոր վիճակից, ինչն էլ հանգեցնում է սեռական աններդաշնակության:

Սեռավարքային անհամատեղելիություն:

Հատկանշական է, որ եթե ամուսնական զույգն ապրում է ամուսիններից որևէ մեկի ծնողական ընտանիքում, ապա անխուսափելի են դառնում խնդրահարույց իրավիճակները, բաց և փակ բախումները, ինչի հետևանքով կարող է առաջանալ սեռավարքային անհամատեղելիություն: Նորապսակների սեռավարքային համատեղելիության վրա ազդում են նաև ամուսիններից յուրաքանչյուրի բնավորության գերակա գծերը, ինչպես նաև, նրանցից որևէ մեկի (կամ երկուսի) մոտ առկա տագնապային, ինքնամփոփ վիճակը, կասկածամտությունը:

Սեռական աններդաշնակություն:

Սեռական աններդաշնակությունը կարող է առաջանալ ամուսինների ոչ պատշաճ մաքրակենցաղությունից, թույլատրելիության շրջանակի անհամապատասխանությունից, ոչ հարմարավետ պայմաններից, սեռական խանգարման, ինչպես նաև սեռական հարաբերությունների մասին ոչ պատշաճ գիտելիքի առկայությունից (Пайнз Д., 1997):

Նշված սեռական աններդաշնակությունները, սակայն, կարող են կարգավորվել համալիր եղանակով, որտեղ գերակա դեր ունի հոգեթերապիան: Այս գործընթացում պետք է ներգրավվեն ամուսիններից յուրաքանչյուրը, քանզի առաջնային խնդիրը նրանց միջանձնային հարաբերությունների վերականգնումն է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամուսինների սոցիալ-հոգեբանական համատեղելիությունը որոշվում և չափվում է նաև հայ ընտանիքում ամրագրված արժեքային համակարգով: Հայտնի է, որ նոր

արժեքների ներառումը, որը հանգեցնում է արժեհամակարգի փոփոխության, ընթանում է զույգերի պատկերացումների, դիրքորոշումների, նպատակների, դրանց տարբերությամբ պայմանավորված, վարքային հակասությունների դրսևորման դաշտում, ինչով և ի հայտ է գալիս երիտասարդ ամուսինների անհամատեղելիությունը (Еникеев М., 2010):

Ուստի, ընտանեկան կյանքում, առավել կարևորվում են ամուսինների արժեքների համատեղելիությունը, որով արտահայտվում է նրանց ընդհանրությունը և համագործակցությունը: Որքան ամբողջական է և լիարժեք ընտանեկան հարաբերություններում ամուսինների արժեքների համապատասխանությունը, այնքան մեծանում են նրանց համատեղ գործունեության, խաղաղ համակեցության, կայունության և ամրության հնարավորությունները (Արզումանյան Ա., Մկրտչյան Ս. & Սարգսյան Վ., 2002):

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հաջողվել է բացահայտել ընտանեկան կյանքի այն ոլորտները, որտեղ գերակա է երիտասարդ ամուսինների արժեքային համակարգի համապատասխանությունը:

Ներկայացնենք ընտանեկան արժեքների հիերարխիկ համակարգի համեմատական վերլուծությունը՝ համատեղ կյանքի տարբեր տևողությամբ հետազոտված 100 հայ ընտանիքներում: Նշենք, որ հայ ընտանիքներում, ընտանեկան արժեքների հիերարխիկ համակարգի կառուցվածքային բաղադրիչներն են կազմում ընտանեկան այն գործառույթները, որոնք արժևորվում են ամուսիններից յուրաքանչյուրի կողմից՝ նվազ կարևորից դեպի առավել կարևորը դասակարգմամբ:

Համաձայն մեր տվյալների, ընտանեկան արժեքների բուրգը գլխավորում է հուզական գործառույթը, քանի որ մասնավորապես հայ ընտանիքներում ամուսինների երջանկությունն ուղղակիորեն կախված է հուզական ամուր կապերի և բարոյա-հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ձևավորումից:

Արժեքային բուրգի երկրորդ տեղում երիտասարդ հայ ընտանիքներում դիտարկվում է անձնային նույնականացումը, որը ենթադրում է հետաքրքրությունների, ցանկությունների և նպատակների համապատասխանություն:

Արժեքային բուրգի երրորդ տեղում է ամուսինների սոցիալական ակտիվությունը, որը ներառում է անձի հասարակական, կրթական, մասնագիտական, քաղաքական, կրոնական, մշակութային ուղղվածությունը, իմացական արժանիքները, գործնական կարողություններն ու կիրառական հմտությունները:

Հայ ընտանիքում երիտասարդ ամուսինների արժեքային բուրգի չորրորդ՝ վերջին տեղում են արտաքին գրավչությունը, մաքրակենցաղությունը, ինտիմ/սեռական հարաբերությունները: Վերջինիս արժևորման ցածր մակարդակը պայմանավորված է նրանով, որ ամուսնացած երիտասարդ կանայք և տղամարդիկ սեռական ներդաշնակությունը գրեթե չեն համարում ընտանեկան երջանկության, համատեղելիության և սոցիալ-հոգեբանական հարմարման նախապայման, ինչն ազգային հոգեբանության և հայերին բնորոշ կարծրատիպերի դրսևորման արդյունք է:

Մեր ուսումնասիրությունների ամբողջականությունն ապահովելու նպատակով իրականացրել ենք նաև, տղամարդկանց և կանանց ընտանեկան արժեքների հիերարխիկ բուրգի համեմատական վերլուծություն: Պարզել ենք, որ ընտանեկան արժեքների սանդղակում, սոցիալական ակտիվության, արտաքին գրավչության և տնտեսակենցաղային ոլորտներն առավել կարևորվում են կանանց քան տղամարդկանց կողմից, իսկ ինտիմ/սեռական հարաբերությունների ոլորտում կանանց կողմից գրանցված միավորները զգալիորեն զիջում են տղամարդկանց կողմից արձանագրված ցուցանիշները:

Հայ ազգի արական և իգական սեռի ներկայացուցիչների շրջանում ընտանեկան արժեքների տարբերակումը հնարավորություն ընձեռեց նաև տոկոսային հարաբերակցությամբ ներկայացնել երիտասարդ ընտանիքներում ամուսինների անհամատեղելիության ցուցանիշները: Այսպես, ինտիմ-սեռական հարաբերությունների ոլորտում արժեքային անհամատեղելիություն է արձանագրվել 21,11% ամուսինների մոտ, իսկ ահա անձնային նույնականացման ոլորտում անհամատեղելիության ցուցանիշը կազմել է 15,5% ընտանիքներում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ելնելով ազգային առանձնահատկություններից, հայ ընտանիքում,

ամուսինների անհամատեղելիության համեմատաբար ցածր ցուցանիշ է արձանագրվում տնտեսակենցաղային ոլորտում, ուստի մեր ուսումնասիրությունների արդյունքում ևս, այդ ցուցանիշը, համեմատ մյուսների, ցածր էր՝ 13,00%: Գծապատկերի տեսքով ներկայացնենք ամուսինների համատեղելիության և սոցիալ-հոգեբանական հարմարման բաղադրիչները երիտասարդ հայ ընտանիքում /Գծապատկեր 1/:



Գծապատկեր 1.

Ամուսինների համատեղելիությունն և սոցիալ-հոգեբանական հարմարման բաղադրիչները երիտասարդ հայ ընտանիքում

Ելնելով խնդրի շուրջ մեր կողմից կատարված վերլուծություններից ու ուսումնասիրություններից՝ մշակել ենք երիտասարդ հայ ընտանիքում ամուսինների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների դասակարգման մոդելը՝ ըստ գերակայության, որն ունի հետևյալ կառուցվածքը. /Մոդել 1/





Մոդել 1. Երիտասարդ հայ ընտանիքում ամուսինների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների դասակարգումը.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, երիտասարդ հայ ընտանիքում ամուսինների համատեղելիությունն ու սոցիալ-հոգեբանական հարմարման արդյունավետությունը պայմանավորված է սոցիալ-դերային այն հիմքով, որով անձը մտնում է ընտանեկան բազմաշերտ հարաբերությունների դաշտ, իսկ ընտանեկան արժեքների համատեղելիությունն ու համապատասխանությունն ամուսինների փոխըմբռնման, համագործակցության և համակեցության կանոնների պահպանման արդյունք է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ.,. (2002). *Կիրառական հոգեբանության պրակտիկում,* Երևան: Զանգակ-97.

Նալչաջյան Ա.Ա. (2004). *Սոցիալական հոգեբանություն.* Երևան: Զանգակ-97.

Анцупов, А. Я. (2005). Системная концепция конфликтов. *Мир Психологии.*, *2*(42), 24–34.

Брутянский Д.Л., Кришталь В.В. (2003). *Психология и психотерапия семейных конфликтов. Хрестоматия. Самара:* Москва: Бахрах.

Еникеев М. И. (2010). *Общая и социальная психология.* Москва: Норма.

Пайнз Д. (1997). *Бессознательное использование своего тела женщиной.* Санкт Петербург: Восточно-Европейский институт.

REFERENCE LIST

Arzumanyan S., Mkrtchyan S., Sargsyan V. (2002). Praktika prikladnoj psihologii *(The practice of applied psychology)*. Erevan: Zangak-97.

Nalchadzhyan A.A. (2004). Social'naya psihologiya *(Social Psychology)*. Erevan: Zangak-97.

Ancupov, A. YA. (2005). Sistemnaya koncepciya konfliktov. *(System concept of conflicts)*. Mir Psihologii., 2(42), 24–34.

Brutyanskij D.L., Krishtal' V.V. (2003). Psihologiya i psihoterapiya semejnyh konfliktov. *(Psychology and psychotherapy of family conflicts)*. Hrestomatiya Samara. Moskva: Bahrah.

Enikeev M. I. (2010). Obshchaya i social'naya psihologiya. *(General and social psychology)*. Moskva: Norma.

Pajnz D. (1997). Bessoznatel'noe ispol'zovanie svoego tela zhenshchinoj. (*The unconscious use of own body by a woman.*). Sankt Peterburg: Vostochno-Evropejskij institut.

РЕЗЮМЕ

СОВМЕСТИМОСТЬ И СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ СУПРУГОВ В МОЛОДОЙ АРМЯНСКОЙ СЕМЬЕ

МЕРИ АЛЕКСАНЯН

В статье рассматривается вопрос совместимости супругов и социально-психологическая адаптация в молодых армянских семьях, которая, с одной стороны, опирается на положительные чувства, эмоциональность, с другой стороны, на согласование различных требований (сексуальных, материальных, духовных), включая интересы, мнения, взгляды, на сложившуюся в семье систему ценностей. Также представлены аспекты психологической совместимости пар. Обсуждение указанных аспектов выявляет главенство совместимости ценностей и их соответствия в армянских семьях, что обеспечивает взаимопонимание и

сосуществование молодых супругов. В результате проведенного исследования было выявлено одно из основных направлений совместной жизни в армянских семьях, то есть соответствие системы ценностей молодых супругов, которую мы представили в виде иерархической системы. Также разработана классификационная модель особенностей социально-психологической адаптации супругов в молодых армянских семьях. Следовательно, проведенные анализы и исследования по данному вопросу определяют новизну статьи.

Ключевые слова: молодая армянская семья, супруги, совместимость, гармония, свциально-психологическая адаптация, семейные ценности.

ABSTRACT

SPOUSES' COMPATIBILITY AND SOCIO-PSYCHOLOGICAL ADAPTATION IN A YOUNG ARMENIAN FAMILY

MERI ALEXANYAN

The article discusses the issue of spouse compatibility and social-psychological adjustment in young Armenian families, which, on the one hand, relies on positive feelings, emotionality, on the other hand, on the agreement of various demands (sexual, material, spiritual), including interests, opinions, views, on the value system established in the family. Aspects of psychological compatibility of couples are also presented. The discussion of the mentioned aspects reveals the supremacy of the compatibility of values and their conformity in Armenian families, which ensures the mutual understanding and coexistence of young spouses. As a result of the conducted research, one of the main areas of joint life in Armenian families was revealed, that is the conformity of the value system of young spouses, which we presented in the form of a hierarchical system. The classification model of socio-psychological adjustment features of spouses in young Armenian families has also been developed. Hence, the analyzes and studies done on the issue determine the novelty of the article.

Key words: *young Armenian family, spouses, compatibility, harmony, social-psychological adaptation, family values.*

Հոդվածը ստացվել է՝ 11.04.2022 :

Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 04.05.2022:

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 14. 06. 2022: